Ներկայ տարեւոյս ուխտաւորաց մէջ Տփխիսու վիճակի Շամշադինու գաւառակի Ճամբարակ գիւղի քահանայ Արժ. Տ. Մարտիրոսն Սարգսեանց ուխտաւորութեան գալով ի Սուրբ Տելիս աշխատասիրած է հետեւեալ երգն, և յանձնելով խմբագրութեանս խնդրած է տպագրել։ Ցիշեալ քահանային խնդիրն չը մերժելու համար կը հրատարակեմք ահա Սիօնի մէջ նորա երգն, ոչ իբրեւ նշանաւոր ինչ բանաստեղծութիւն, այլ իբրեւ պարզ թարգման գիւղական քահանայի բարեպաշտական զգացման։ Արժ. երգասացն բանի մի երգեր եւս յանձնեց հրատարակելու, բայց գովեստներ լինելով Ս. Աթոռոյս կացութեան և միաբանութեան նմատմամբ, չը հաճեցանք հրատարակել։

ԵՐԳ Ի ՎԵՐԱՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

Ի Տ. ՄԱՐՏԻՐՈՍ ՔԱՀԱՆԱՅԷ

1 Երուսաղէմ, Երուսաղէմ,
Արժան տէս տար, որքան սաղ եմ.
Ցայտնի է տնանկ եմ, ոտ/ցս կաղ եմ
Տուր զօրութիւն որ այժմ մեղքի քաղեմ։
Ցղացած եմ մեղօք, փուչ ծաղկած բաղ եմ
Զը թառամի հոգիս, միտքս չը շաղ եմ
Որքան որ չեմ շաղել, տար Երուսաղէմ։

2 Ո՛վ Տեառնեղբայր և սուրբ Գլխադիր
Հայցելով խնդրեցիր, մեր Տիրոջն ասիր
Ով ինձ մօտ քեզ խնդրէ, Տէր, տուն ունկն դիր
Վ.իրօք պանդոկի եմ, մեղ փութով հասիր
Սուրբ աջդ գլխուս դիր, ասա զօրացիր.
Եկեալն արտաքս չեմ հանիլ, ասիր,
Նման անառակին տար Երուսաղէմ։

3 Արդեօք ե՞րբ կը լինի հանիմ Գողգոթայ
Շիրմին Ադամայ, որբոյն Գագաթայ
Ղազարու յարութեանն և քեռն Մարթայ
Մենդեան Բէթլէհէմի և հայր Յովսեփայ
Գնալն վայ վայ բաղէն, տեսնելն փառք ա
Եւ զղջայ իւր մեղքից, մեղայ կը կարդայ
Իբր աւազակին տար, Երուսաղէմ։

4 Մարդ պէտք է չը նախանձի այլոց վաստակին,
Պարտի ականջ դնել սրբոց կտակին.
Զարշարել իւր անձն, հասնել նպատակին,
Փութով կընկերանայ մեծ նահատակին,
Երբ դառնամք մեր մեղքից իբր աւազակին
Շուտով կ'արժանանամք սրբոց պսակին.

digitised by A.R.A.R.@

Մեզ էլ արժանի տես նոցա խմբակին.
Տէր, դու ես լոյս ու ճար, տար Երուսաղէմ։
5 Գոհութիւն քեզ, Տէր Յիսուս, ոչ բերիր սուրբ Երուսաղէմ
Սրտիս մէջն խոց չը մնաց, աչք տեսի որքան սաղ եմ
Զարշաբանացդ նայելով, լամ արտասուք մաղ եմ
Ո՛վ սուրբ Յակոբ, ինչ մխիթարեա շուտուց եմ յայտնել, ես կաղ եմ,
Դովաբանելուդ թիւ չեմ ճարում, ինայիր խելքս չը շաղեմ,
Մարմնով ատոից փափագս առայ, մեր տունը տար
Երուսաղէմ։

ԵԴԵՍԻԱ

Եդեսիոյ Կրօնական, Քաղաքական, Ուսումնական և Թաղական ժողովոց ատենապետաց և ատենադպրաց նոյնագիր ստորագրութեամբ անթուական և պաշտօնական կնիք չը կրող նամակ մը եկած էր Սրբազան պատրիարքին, որով անցեալ տարւոյ Դեկտեմբեր ամսոյ Սիօնի մէջ հրատարակուած նամակի մը դէմ կը բողոքեն. սոյն բողոքոյ նամակն ստորագրած էր նոյնպէս տեղւոյն Իտարէի ժողովոյ հայ անդամն։ Հարկ չը համարեցինք նամակն հրատարակել նախ՝ այն պատճառաւ, որ անվաւերական կերպարանք ունէր, երկրորդ՝ որ ուղղակի Սիօնի խմբագրութեան ուղղուած չէր։

Սակայն կը զարմանամք, որ մինչդեռ Սիօնի նամակագիրը իւր ըրած դիտողութեանց և յայտնած ցաւալի իրողութեանց ստուգութեան վերայ ամենեւին անկասկած յայտնի ստորագրութիւն կը դնէ իւր գրածին տակ. իսկ նամակագիր ատենապետը և ատենադպիրք առանց հրատարակուած նամակին պարունակութեան պատասխանելու, ուղղակի Սիօնի դէմ կը յարձակին, որ իբրեւ, անկրօն պոպոխի մը սոպ սոպ խրդոի խօսից հաւոպ ընծայելով շնորհը ոչնչացած է գեղոյն առաջնորդին և էջմիածնոյ վերայ։

Մեք այս մասին կը հրաւիրեմք նամակագիրներն, որ Սիօնի նոյն համարն կրկին անգամ կարդան ուշի ուշով և մանաւանդ յաջորդ ամսատետրի մէջի շարունակութիւնը, (զոր կարծեմք բնաւ տեսած չեն). եթէ նոյա մէջ իրօք սոպ սոպ խրդոի խօսքեր կան, սը-տութեանց մի առ մի պատասխանեն, զոր Սիօն գոհունակութեամբ պիտի հրատարակէ ի սէր ճշմարտութեան։

Մինչդեռ Սիօնի նամակագիրը Արեւեան Յակոբ վարժապետը չը գովէլէն զատ, նորա ազգամէնաս արարքներն պարսաւած էր. սակայն նամակագիր ատենապետք և ատենադպիրք այնչափ կրիւք կարդացած են Սիօնը՝ որ բնաւ չեն հասկացած և կրից մարգարէութեամբ գուշակած են, որ Սիօնի նամակագիրը կամ Արեւեանն է և կամ նորա նման լարաճաի անձ մը։ Ուստի կրկին կը հրաւիրեմք, որ կարդան Սիօնը առանց կրքի և մեծ ուշադրութիւն, եթէ ունին պատասխան մը թող ղրկեն մեզ, բայց ոչ անձնական կնիքով և ոչ նոյնագիր ստորագրութեամբ, այլ պաշտօնական կնիքներով և յատուկ ստորագրութեամբ։

Մեք արդէն Սիօնի նամակագրի գրածէն առաջ Ուլնեցի Դաւիթ վարդապետի մասին Պոլսոյ լրագրաց մէջ շատ ցաւալի լուրեր կարդացած էինք. կը ցաւէինք Դաւիթ վարդապետի

digitised by A.R.A.R.@